

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՆ ՎԻՆՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ «ՄԱՐԴԿԱՅԻՆ  
ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՎԵՍԼԻ ՋԵՔՍՈՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ» ՎԵՊԵՐՈՒՄ  
THEME OF WAR IN THE NOVELS OF WILIAM SAROYAN "THE HUMAN  
COMEDY" AND "THE ADVENTURES OF WESLEY JACKSON"  
ТЕМА ВОЙНЫ В РОМАНАХ УИЛЬЯМА САРОЯНА «ЧЕЛОВЕЧЕСКАЯ  
КОМЕДИЯ» И «ПРИКЛЮЧЕНИЯ ВЕСЛИ ДЖЕКСОНА»**

Նելլի Գալստյան  
Nelli Galstyan  
Нелли Галстян

Մոսկուսի հոռենացու անվան համալսարան  
University named after Movses Khorenatsy  
Университет имени Мовсеса Хоренаци

ngalstyan@polytechnic.am

Ներկայացվել է՝ 28.04.2025; գրախոսվել է՝ 14.10.2025; ընդունվել է՝ 14.04.2026  
Received: 28.04.2025; Revised: 14.10.2025; Accepted: 14.04.2026  
Представлено: 28.04.2025; рецензировано: 14.10.2025; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով  
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence  
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-152

*Ամփոփում* – Վիլյամ Սարոյանը քսաներորդ դարի համաշխարհային գրականության ականավոր դեմքերից է, որի ստեղծագործությունների հիմնական առանցքը մարդկային բարությունն ու սերն են: Հեղինակն ինքն էլ նշում է՝ եթե մի բան կա, որ դրդել է իրեն գրել, այն է, որ ինքը քաջ գիտակցում է՝ մարդը մարդու եղբայրն է: Հենց այս սկզբունքի իրացմամբ էլ նա փորձում է կյանքում գտնել այն, ինչն իր համար հավերժական ու բարձր արժեք է: Գրողի մարդասիրական գաղափարներն ուղղակի պարուրված են փիլիսոփայական խտացումներով: Ըստ Սարոյանի՝ մարդն առհասարակ ընդունակ չէ գազանությունների, գազան է դառնում ամբոխը: Անհավանական լավատեսության ու հույսի բոլոր դրսևորումներն արտահայտված են ամերիկահայ գրողի գրեթե բոլոր գործերում: Գրականության և արվեստի բարձրագույն առաքելությունը ամերիկահայ գրողը տեսնում է աշխարհն ավելի լավը դարձնելու, մարդկանց միասնությանը և երջանկությանը ծառայելու մեջ: Սարոյանի ստեղծագործական տիրույթում խորհրդանիշները զգալի տեղ են զբաղեցնում՝ ներկայացնելով ժամանակակից աշխարհում տիրող պատերազմները, ահաբեկչությունները, անասնական վերաբերմունքը և համամարդկային արժեքների կորուստը: Գրողի սրբազան նպատակն է մարդկանց մեջ սերմանել բարություն, մեծահոգություն, նրանց միջից վանել թշնամությունը և առելությունը, աշխարհի երեսից վերացնել մահ ու ավեր սփռող պատերազմները: Սարոյանն անդադար ջանում է գտնել մարդկային հոգու ամենանուրբ զգացողության բանալին: Նրա ստեղծագործությունների

հիմնական առանցքն են հումանիստական գաղափարները. գրողն անընդմեջ որոնում է սեր, բարություն և Աստծուն իր իսկ հերոսների մեջ: Նրա հերոսներն անցնում են չարաբաստիկ դարի պարտադրված և թելադրող կանոնների միջով. կյանք, որը պատուհաս է բոլորի համար, բայց հանուն որի պայքարում են բոլորը:

*Abstract* – William Saroyan is one of the outstanding figures of American and world literature of the twentieth century, whose works revolve around human kindness and love. The author himself notes that if there is one thing that motivated him to write, it is that he is well aware that man is a brother to man. It is through the implementation of this principle that he tries to find in life what is an eternal and high idea for him. The writer's humanitarian ideas are simply enveloped in philosophical condensations. According to Saroyan, man is not capable of bestiality at all, the crowd becomes a beast. All manifestations of incredible optimism and hope are expressed in all of Saroyan's works. Saroyan sees the highest calling of literature and art in making the world better, serving the unity and happiness of people. Symbols occupy a rather large place in Saroyan's creative domain, representing the wars, terrorism, bestiality, and universal human rights prevailing in the modern world, loss of values. The writer's sacred goal is to instill kindness, generosity in people, to remove enmity and hatred from among people, to eliminate wars that spread death and destruction from the face of the world. Saroyan constantly strives to find the key to the most delicate feeling of the human soul. His works mainly revolve around humanistic ideas: the writer is constantly searching for love, kindness and God in his heroes. In Saroyan's works, the heroes go through the imposed and dictated rules of an evil century: a life that is a scourge for everyone, but for which everyone is fighting.

*Аннотация* – Уильям Сароян – один из выдающихся представителей американской и мировой литературы XX века, произведения которого посвящены теме человеческой доброты и любви. Сам автор отмечает, что его побудило к литературному творчеству осознание того, что человек человеку – брат. Именно через реализацию этого принципа У. Сароян пытается найти в жизни то, что является для него вечной и высокой идеей. Гуманитарные идеи писателя вылились в философские обобщения. По мнению Сарояна, человек не способен на злодеяния; толпа становится зверем. Все его творчество пронизано оптимизмом и надеждой. Сароян видит высшее призвание литературы и искусства в том, чтобы сделать мир лучше, служить единству и счастью людей. Символы занимают важное место в творчестве Сарояна, олицетворяя войны, терроризм, жестокое обращение с животными и утрату общечеловеческих ценностей, что нашло распространение в современном мире. Священная цель писателя – воспитать в людях доброту и великодушие, искоренить вражду и ненависть среди людей, пресечь войны, сеющие смерть и разрушение. Сароян постоянно стремится найти ключ к самым тонким пластам человеческой души. Его произведения в основном посвящены гуманистическим идеям. Писатель пытается увидеть в человеке любовь и доброту. В произведениях Сарояна герои сталкиваются с навязанными и диктуемыми правилами жизни зловещего века, но при этом они борются за жизнь, которая приносит горечь и разочарования.

Հիմնարարներ – հիշողություն, պատերազմ, ժամանակ, տարածություն, հոգեկերտվածք:

Keywords – memory, war, time, space, mentality.

Ключевые слова – память, война, время, пространство, ментальность.

### Ներածություն

Վ. Սարոյանն իր բարոյափիլիսոփայական որոնումներով փորձում է գտնել արդարությունը և ճշմարտությունը, գեղեցկության և ներդաշնակության իդեալները, բարու և չարի արմատները, ինչպես նաև մարդու ազատության և երջանկության ճանապարհները՝ ոչ միայն խոր ապրումների՝ էկզիստենցիայի, այլև դատողությունների միջոցով: Գրողը դատապարտում է մարդու բարոյական անկումը, նրա կերպարի աղավաղումն ու խաթարումը, մարդկային կյանքի աններդաշնակությունը, բռնությունը, ատելությունը, կեղծիքն ու սուտը, հազարավոր կյանքեր խլող պատերազմները:

Ամերիկահայ գրողը «Մարդկային կատակերգություն», «Վեսլի Ջեքսոնի արկածները» ստեղծագործություններում դատապարտում է պատերազմները. պատերազմ (Սարոյանը նկատի ունի Առաջին աշխարհամարտը), որը, ինչպես ինքն է հավաստում. «չարիք դարձավ հայության համար, պատերազմ, որ մենք չէինք մղում, բայց որտեղ կոտորվում էինք մենք» (Сароян 1999, 23):

Սարոյանն ընդունում է, որ աշխարհում գոյություն ունեն սով, համաճարակներ, երկրաշարժեր և այլ աղետներ, որոնք կարող են բազմաթիվ մարդկային կյանքեր խլել, և այդ ամենն արդարացվում է բնության երևույթների ի հայտ գալով, սակայն չի կարողանում համակերպվել մարդկության ամենամեծ չարիքի՝ պատերազմների հետ, որոնք առաջանում են մարդու ձեռքով՝ մարդկային գեներն ու ազգությունը կորստի մատնելու:

«Սարոյանի գրականության գերագույն խնդիրն էր, – գրում է ամերիկացի գրաքննադատ Դեյվիդ Քալոնը, – աշխարհի նյութապաշտության ու դաժանության պայմաններում արդարության ու բարության սերմեր տարածել, օգնել մարդուն՝ հայտնաբերելու դեպի ինքն իրեն տանող ազնվացման ճանապարհը» (Calonne 1983, 183):

Քսաներորդ դարի գրականությունը ողողված է միայնության, մարդկային հոգու ընդվզման, իրականությունից փախուստի, մարդու մեջ ապրող ներքին «ես»-երի, մտածելակերպի, մարդկային տեսակի պահպանման ու գոյատևման խնդիրներով: Այսպիսին են նաև Սարոյանի ստեղծագործություններն ու դրանցում ապրող հերոսները: Նրա բոլոր կերպարները իրենց ինքնաորոնման ճանապարհին են, որտեղ բախվում են հուսահատությանն ու լքվածությանը: Սարոյանը ջանում է ցույց տալ պատերազմական իրավիճակներում կյանքի և մահվան անհամատեղելիությունը: Պատերազմը բոլորի համար ատելի երևույթ է, և մարդիկ կամա թե ակամա հայտնվում են այդ դաժան երևույթի ճիրաններում, դառնում դրա կամակատարը: Նրանք այլևս չունեն հնարավորություն՝ ընտրելու լուսավոր ուղի, այլ միայն պարտադրված են գոյության և մահվան կոիվ տալ մեկ վայրկյան ավելի ապրելու համար: Ուստի այս է պատճառը, որ զգայականությանը փոխարինելու են գալիս տագնապը, վախը, որոնք էլ բացառում են խղճահարությունը գործող անձանց նկատմամբ: Ժամանակակից մարդն ամեն կերպ ջանում է կոծկել իր բնականությունը՝ դրանով իսկ հեռանալով բնությունից, մարդկային սկզբից և տիեզերականից: Սարոյանի և նրա ժամանակակից

գրողների հիմնական նպատակն է քսաներորդ դարի մարդուն ծուլել իր սկզբնական ակունքներին, թեկուզև ոչ իրական աշխարհում: Իսկ մարդկության սկզբնականությունը գալիս է գենետիկայից: Այսօրվա մարդը նույնպես ինչ-որ չափով կրում է իր ցեղային հերոսների անվերջ որոնումները, դեգերումները, ձգտումները, փառքը և այլն (Hamalian 1987, 96):

### **Անցյալի և ներկայի համադրումը Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն» վեպում**

«Մարդկային կատակերգություն» վեպը փիլիսոփայական նոր լուծումների անմիջական արձագանքն է, և ամերիկյան գրականության մեջ այն պիտի դասել մեզ համար արդեն քաջաճանոթ «ներապրումի» գեղագիտական համակարգում քչերի մեջ լավագույնների շարքին: Վեպը Սարոյանը գրել է 1943 թվականին, որը սկզբնապես հղացվել է որպես կինոսցենար, ապա նոր միայն վեպ: Լինելով ինքնակենսագրական, այն հուզիչ մի պատմություն է պատերազմական ողբերգական կյանքի մասին: «Մարդկային կատակերգություն» վեպը Սարոյանը ձոնել է մորը՝ Թագուհի Սարոյանին: «Վաղուց էի պատրաստվում մի վեպ գրել հատուկ քեզ համար: Ես ուզում էի, որ այն լինի լավագույնը, որ երբևէ կարողանալու եմ գրել: Եվ այժմ, վերջապես, թեկուզև մի քիչ հապճեպ, անում եմ այդ փորձը... Հուսով եմ, որ կհավանես: Գրել եմ հնարավորին չափ պարզ, լրջության և զվարթության այն շղարշով, որ հատուկ է մեր ընտանիքին և հատկապես քեզ» (Սարոյան 1986, 316):

Վեպում գործողությունները չեն զիջում հոգեբանական հետախուզումներին: Այստեղ բազմաթիվ չեն կերպարները. նրանք հյուսված են գլխավոր հերոսի՝ 14-ամյա Հոմեր Մաքոլիսի գործողությունների և հիշողության առանցքի վրա, և դրանք ի հայտ են գալիս ապրումների, հետահայաց զգացումների հիշատակների ոգեշնչման շնորհիվ, շատ հաճախ՝ ներկա ժամանակային գոտում առնչված պատերազմական դեպքերի և իր հայրենի քաղաքի՝ Իթաքեի զանազան դեպքերի հետ՝ տպավորիչ և դրվագային: Վեպի սյուժետային զարգացումը անցյալի ու ներկայի համադրված քննությունն է: Կարծում ենք, պատահական չպետք է համարել վեպի այս յուրահատկությունը, որը կազմում է գրողի ժանրային կառուցողական «դժվարությունը»՝ մի կողմից կապված «հիշողության» ժամանակի (անցյալ), մյուս կողմից «գործողության» ժամանակի (ներկա) գեղարվեստական ընկալման հետ: Հերոսների հարաբերությունները գլխավոր հերոսի հետ, միջավայրի անհանգիստ, լարված տեսողական դաշտը պահպանում են հերոսի վիպական միասնական ճանաչումը, ազատում նրա կերպարը սխեմատիկ հաճախանքից: Վիպական գործողությունները տեղի են ունենում Իթաքե քաղաքում: Սարոյանը պատմում է կալիֆոռնիական այդ փոքրիկ քաղաքի իրական առօրյայի մասին: Թե՛ քաղաքի, թե՛ գլխավոր հերոսի անունները մեզ հուշում են, որ վեպը գրելիս գրողը դիմել է Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմներին: Անցյալը Սարոյանի ստեղծագործության մեջ ներկայանում է երկու ձևով՝ նախ որպես կենդանի և գործուն մի ուժ, ապա որպես սոցիալական

և պատմական որոշակիությունից, երբեմն նույնիսկ ժամանակից և տարածությունից դուրս մի աշխարհ՝ այնպես, ինչպես անգլիացի գրող Ջ. Ջոյսի «Ուլիս» (1918) վեպում: Ջոյսի նմանողությամբ Սարոյանը դիմում է հեռավոր անցյալին, անցյալի ավանդույթներին: Խախտվել է համաչափությունը նույնիսկ բնության և մարդու միջև, և որպեսզի հաստատվի ցանկալին, անվարան հարկ է վերցնել անցյալի կորսված ժառանգությունից բնապաշտությունն ու ուժը և երիտասարդական ավյունով նայել վաղվան՝ երագելով լուսավոր գալիքի մասին: Երկու գրողներն էլ իրենց հերոսներին վերցրել են անցյալից: Թե՛ Ջոյսը, թե՛ Սարոյանը գլխավոր հերոսին բնութագրում են ներաշխարհում՝ ներսից, ցուցադրում են ոչ թե նրա գիտակցված գործողությունները, այլ նրա հոգեկան աշխարհը, ծանր ապրումները, ճնշվածությունը, կրքերն ու բնազդները, որոնք ժամանակ առ ժամանակ վեր են հանվում նրա ենթագիտակցությունից: Սարոյանն իր հարուստ ստեղծագործական կյանքի ընթացքում հաստատել և ամրակայել է այն տեսակետը, ըստ որի՝ գլխավոր դերը կյանքում տրված է ոչ թե Աստծուն և կառավարությանը, այլ մարդուն:

«Եթե կյանքը տխուր է, ազնիվ կամ անմիտ, – հավաստում է միսիս Մաքոլին, – դրա պատճառը մարդն է: Եթե հարուստ է և գեղեցկությամբ լեցուն, ուրեմն ինքը մարդն է այդպիսին և ոչ թե շրջապատը: Այդպես է: Եթե որևէ բան վատ է, տգեղ կամ խեղճ, միշտ ինքը մարդն է այդպես, և յուրաքանչյուր մարդ իր մեջ մի աշխարհ է: Նա այդ աշխարհը կարող է վերակառուցել և սիրելի մարդկանցով բնակեցնել, եթե նրա սիրտն ընդունակ է սիրո, կամ լցնել ատելի մարդկանցով, եթե նրա սիրտը ընդունակ է ատելության: Աշխարհը պետք է վերակառուցվի նրա մեջ ապրող յուրաքանչյուր անհատի կողմից» (Սարոյան 1986, 424):

Ուստի պատահական չէ, որ Սարոյանն իր այս և նաև մյուս ստեղծագործություններում մեծ տեղ է հատկացնում մարդկային ապրումներին և դրանց բացահայտմանը: Գրողն առասպելի մեջ տեսնում է հավերժական իմաստ՝ կյանքի և մահվան բախում, որ այստեղ հանդես է գալիս պատերազմի և խաղաղ կյանքի, անմեղ մարդկանց բախման միջոցով, այնուիետև կյանքի անընդմեջ մաքառումներ, մարդու պայքար չարի դեմ: «Նետաքրքիր է՝ ինչպես է Սարոյանը պայքարում չարի դեմ. չարությամբ, ընդվզումով, թե՞ այլ կերպ, որն ի վերջո հանգելու է կռվի, պատերազմի, թե՞ բարությանը և սիրով. «Չարերը չգիտեն, որ իրենք չար են և հետևաբար անմեղ են: Չար մարդուն պետք է ներել, – ասում է միսիս Մաքոլին, – նրան պետք է սիրել, որովհետև մեր յուրաքանչյուրից ինչ-որ բան կա աշխարհի ամենաչար մարդու մեջ, ինչպես որ նրանցից ինչ-որ բան կա մեր մեջ» (Սարոյան 1986, 425):

Վեպի փիլիսոփայական իմաստը «ոգևորության և բարու աշխարհի» հոչակելու մեջ է: Որքան էլ պատերազմն իր չար գործն է կատարում՝ օրական խլելով երիտասարդ կյանքեր, դժբախտացնելով ընտանիքներ, այն նաև մարդկանց մեջ զարմանալիորեն ամրակայում է մարդկայնությունը, բարությունը: Սարոյանի հերոսները գրավիչ են, ուշադիր միմյանց նկատմամբ, նրանք ձգտում են դեպի մարդկային ջերմության: Նրանք քաջ գիտակցում են, որ իրենց ուսերին

պարտավոր են տանել անհեթեթ, անարդար աշխարհի բարոյական ողջ ծանրությունը, և որ կարևորն է՝ պատասխանատու են աշխարհի մեջ եղած զուգակշիռ ներուժի պահպանման և շարունակության համար: Այստեղ, ինչպես իր նախորդ ստեղծագործությունների ներքին շերտերում, ամրակայված է սարտոյան կեցությունը-ոչնչությունը-գիտակցությունը, որը գրողին տանում է սարտոյան՝ «գիտակցությունը՝ որպես բարձրագույն կեցություն» մեկնական հունով՝ դրսևորելով փիլիսոփայական գեղագիտական հայացքի ինքնատիպություն: Մարդն ինչպես Սարտրին, այնպես էլ Սարոյանին ներկայանում է իբրև կոնկրետ մի բան՝ իր կյանքով, կենսական իրավիճակում կատարած իր արարքով: Գլխավորը տվյալ անհատի գոյությունն է իբրև մի ամբողջություն՝ իր զգացմունքներով և ցանկություններով, որի վրա էլ Սարոյանը բևեռում է իր ուշադրությունը: «Սարոյանի վարպետությունն առաջին հերթին այն է, – գրում է Խաչիկ Թոլոյանը, – որ նա մարդկային հակասություններն ու հակադրությունները ներկայացնում է իբրև նոր մարդկային հարաբերությունների մնացորդներ, իբրև վաղուց անցած երջանիկ ժամերի արտացոլումներ» (Tololyan 1996, 39):

Ստեղծագործության հերոսները պատանիներ և ծերեր են: Սարոյանը նրանց պատահաբար չի դարձրել հերոսներ: Ծերերը, որոնց նկատմամբ գրողը տածում է ջերմ վերաբերմունք, պահպանում են տեղեկություններ անցյալի մասին. նրանք են փորձի, իմաստության կրողը, պատանիները հույսն ու երազանքն են, ապագան: Այստեղ չկա երեցների և կրտսերների բախում, փոխարենը ամուր միասնությունն է, միմյանց նկատմամբ տածած հավատն ու սերը, որն էլ գրողի մեկնակետով մարդկության փրկությունն է: Որպես իմաստության մարմնավորում՝ վեպում հանդես է գալիս տարեց ուսուցչուհին, որը կյանքի դասեր է տալիս աշակերտներին, սովորեցնում ապրել որպես մարդ, առանց որի անհնարին է մարդու ակնթարթային կյանքը: «Կարևորն այն է, – ասում է նա, – որ մարդ մարդ լինի, ունենա սիրտ, սիրի ճշմարտությունն ու պատիվը, հարգի նրանց, ովքեր իրենից բարձր են: Եթե իմ աշակերտները մարդ լինեն, այդքանը բավական է: Յուրաքանչյուրդ իսկական մարդ կլինի այն ժամանակ, երբ հակառակ ձեր փոխադարձ չսիրելուն՝ կարողանաք իրար հարգել» (Սարոյան, 1986, 356):

Մայր Մաքսիլը կյանքի իմաստը տեսնում է հավատքի և բարության մեջ: «Եթե դու չհավատաս, – ասում է նա որդուն՝ Հոմերին, – չես ապրի, հավատքն է ամեն ինչ հրաշալի դարձնողը...» (Սարոյան 1986, 335): Ահա կյանքի մի ամբողջ փիլիսոփայություն՝ իմաստավորված դարավոր կենսափորձով:

Վեպի առանցքը կյանք-պատերազմ բախումն է: Սարոյանը սրությամբ զգում է աշխարհի անարդարությունն ու անտարբերությունը, նրա անհոգի վերաբերմունքն անհատի նկատմամբ, որը հաճախ դառնում է անմեղ զոհ. դա ողբերգություն է, ողբերգությունն աշխարհի, որտեղ տիրում է մարդկային մեծ չարիքը՝ պատերազմը: Եվ ո՞վ է այդ դաժան մարդակույ պատերազմի պատճառը, ո՞ւմ է հարկավոր: Գրողը փորձում է որոնել և գտնել պատճառը: Սարոյանը գալիս է այն հետևության, որ այդ ամենի պատճառը ոչ թե մարդն է, այլ

նրա մեջ իշխող չար ոգին, որի դեմ էլ ցանկանում է պայքարել հերոսը (Սարոյան 1986, 462): Ի՞նչն է մարդկանց մղել պատերազմի, – հարցնում է գրողը և պատասխանում. «Մենությունից և թախծից առաջացավ պատերազմը» (Սարոյան 1986, 335), – ահա սարոյանական պարզ ու միանգամայն ճիշտ մեկնաբանությունը: Վեպը պայքար է մենության և թախծի դեմ, և իզուր չեն հերոսները միմյանց նկատմամբ այդքան գորովագութ և կարեկից: Նրանք իրենց անպարտելիությունը տեսնում են միասնության և անխափան սիրո մեջ: Ինչ խոսք, սրանք մարդկանց ապրեցնող հոգեբանական ուժեր են և հույսի հաղթանակ՝ ուղղված անիմաստ աշխարհի դեմ:

Սարոյանը վեպում քննում է կյանքը և մահվան առեղծվածը՝ գլխավոր շեշտը դնելով մահվան խորհրդի վրա, որի շուրջն էլ ծավալվում են բոլոր գործողությունները և միտված են այն մեկնելու: Ամեն օր մահվան ծանուցագրեր են ստացվում. հեռվում փոթորկվող ավերիչ մահվան լուրը ներխուժում է այս փոքրիկ, խաղաղ քաղաք: 14-ամյա Հոմեր Մաքոլին պատերազմում զոհվածների մահվան թղթերն է տանում հարազատներին, ցավով է զգում, որ մասնակից է դառնում անհեթեթ պատերազմի ավերիչ սխալին: Առ այսօր փիլիսոփայական կենսահարցերից անլուծելին մահվան խորհուրդն է, որը գոյապաշտները դիտարկում են գիտակցության և նրա հարաբերական կորստյան գաղափարների անհաշտ, խռովիչ քննության շերտերում: Գրողն առանձին նշանակություն է տալիս գիտակցությանը, որի շնորհիվ մահվան խորհուրդն ստանում է փիլիսոփայական մեկնություն. այն գեղեցիկ է, խորհրդավոր իր պարուրանքի մեջ: Մահը Սարոյանը դիտարկում է նախ որպես բնական անհրաժեշտ վիճակ, որպես մարմնի օրգանական մահացում, այնուհետև ապրած կյանքի ուղղակի շարունակություն: Ի՞նչն է մահից հետո. գուցե այն, ինչ էր մահից առաջ:

«Լավ մարդը երբեք չի մահանում, – ասում է միսիս Մաքոլին, – դու նրան հաճախ պիտի տեսնես. դու նրան պիտի տեսնես փողոցներում, տներում, խաղողի այգիներում և մրգաստաններում, գետերում և ամպերի մեջ, որ այս աշխարհը մեզ համար դարձնում են ցանկալի... Մարդու մարմինը կարող է մեզնից հեռանալ, նրան կարող են մեզնից խլել, բայց այն լավագույնը, որ կա մարդու մարմնի մեջ, մնում է հավիտյան» (Սարոյան 1986, 481):

Սարոյանն առաջարկում է հավերժական կյանքի իր դեղատոմսը, որն է՝ սերը, նրա հետ՝ նաև բարությունը, որոնք էլ գրողի համոզմամբ կյանքի գլխավոր խթանիչներն են:

Այսպես, օրինակ, Մարկուս Մաքոլին մեռնելիս կյանք է շնորհում ընկերոջը, որը վաղն արդեն պիտի փոխարինի իրեն, պիտի գնա իրենց տուն, դառնա իր ընտանիքի հարազատ զավակը: Վեպի ավարտը ստանում է այլաբանական խորք, երբ մահվան պատկերին զուգորդում է ծննդյան ակնարկը: Դա նշանակում է, որ անվախճան է կյանքը, որի երկու ծայրակետերը՝ մահն ու ծնունդը, դժբախտությունն ու երջանկությունը, միշտ ուղեկցում են միմյանց, և այն էլ շնորհիվ մարդու մեջ եղած բարոյական անսպառ ուժերի. «Երկրի վրա ամեն ինչ լավ պետք է լինի, և մարդիկ ավելի լավ պետք է լինեն, – ասում է Սարոյանը, –

լավ մարդը երբեք չի մեռնում» (Սարոյան 1986, 480): Գրողը համոզված է, որ աշխարհում կան բարու ամրոցներ, որոնք կդիմանան ամեն ինչի և երբեք չեն կործանվի, այնպես, ինչպես մարդու հոգում երբեք չի խաթարվի բարին ու բարությունը:

### **Երկդիմի պատերազմի արտացոլումը Վ. Սարոյանի «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում**

«Մարդկային կատակերգություն» վեպից երկու տարի անց՝ 1945 թվականին, լույս տեսավ «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպը, որը Սարոյանը սկսել է գրել Լոնդոնում և ավարտել պատերազմի դաշտում. այն ժամանակ, երբ Դեպարդենում պատերազմական գործողություններ էին, և ինքն ուսումնական ֆիլմեր նկարահանող խմբի հետ նկարում էր Դեպարդենում ծավալվող պատերազմը: Ինչպես այս, այնպես էլ նախորդ ստեղծագործություններում Սարոյանը պատերազմն ընկալեց և պատկերեց ոչ թե որպես մարդկությունից միլիոնավոր զոհեր խլած ազատագրական պայքար ֆաշիզմի դեմ, այլ իբրև անիմաստ, անհեթեթ սպանդ: «Պատերազմի ողբերգության սոցիալ-պատմական ենթատեքստը, – գրում է Նատալյա Գոնչարը Վ. Սարոյանի քառահատորի առաջաբանում, – իրական չափերն ու բնույթը չբացահայտվեցին Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ, բայց և այնպես նրա գործերում կրքոտ բողոք հնչեց ընդդեմ ռազմամոլության, ընդդեմ չարի և բռնության: Պատերազմը ժխտվեց իբրև մարդու հոգեբանական վիճակ, մերժվեցին պատերազմի հետևանքները՝ քայքայված ընտանիքներ ու բռնություն մարդու լավագույն ձգտումների նկատմամբ» (Սարոյան 1991, 429):

«Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում մարդու լավագույն զգացումներն ու ձգտումները բախվում են պատերազմի և զինվորականության անմարդկայնությանը: ««Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպ-ռեպորտաժ չէ, – նշում է Ա. Չվերևը, – Սարոյանը գրել է իր տեսածի, ապրածի, զգացածի մասին» (Зверев 1982, 185), որն էլ վեպը գրելու հիմքն է հանդիսացել: Իսկ ի՞նչ է Սարոյանի տեսածն ու զգացածը՝ սպանդի անմիտ դատողություններ, զորամասային օրենքների անհոգություն, Լոնդոնի կործանում, գետնափոր պատսպարանների առջև անբարոյականների ամբոխ, որոնք, չնայած շրջապատի մահաբեր կյանքին, շարունակում են իրենց անբարոյական կյանքը, վիրավորներով լեցուն հիվանդանոցներ, խանութների առջև խմբված հազարավոր կտրոնավոր մարդիկ, խառնաշփոթ, ղեկավարության հանցավոր անտարբերություն, բազմաթիվ անտեղի զոհեր:

Սարոյանը պատերազմը բնորոշում է որպես արքայազնի. այն անհարիր է անհատի ձգտումներին ու երազանքներին: Նա՝ որպես մտածող և գրող, վեպում քննում է երկդիմի պատերազմը. պատերազմի դաշտում մարդիկ միմյանց դեմ կռվում են ոչ միայն որպես հակառակորդներ և լայնախոհ ռազմիկներ՝ իրարից վրեժ լուծելու, իրար պատժելու, հաղթելու և տարածքներ նվաճելու անհագ մոլուցքով, այլև որպես օտարության ախտով տառապողներ՝ միմյանց նկատմամբ

ունեցած օտարության արգելքներով, որի վրա էլ Սարոյանն ուղղում է իր լուսարձակը (Hovard 1966, 139): Այս օտարությունն է, որ ծնում է ատելություն, թշնամանք, պատերազմ: Սարոյանի խորին համոզմամբ, մարդկանց միջից օտարացվածությունը հեռացնելու դեպքում հնարավոր կլինի վերջ դնել պատերազմին: Փիլիսոփայական դասերի հիման վրա Սարոյանը մարդուն տեսնում է մերթ իր վեհության-գիտակցության մեջ, մերթ էլ անկման, խեղճության վիճակում: Մարդը գիտակցության շնորհիվ ի վիճակի կլինի հետ բերել այն, ինչը կորցրել է՝ դատողությունը, բանականությունը, որը վերստին կվառի մարդու հոգևին լույսը (Սարոյան 1999, 125): Վիպակում գործողությունները ներկայացվում են գլխավոր հերոսի՝ 19-ամյա Վեսլիի դատողություններով և արարքներով: Նա իր ասածը փորձում է տեղ հասցնել անմիջականորեն, պատերազմ տեսած պատանիների միջոցով: Ի՞նչ է պատերազմը հազարավոր պատանիների համար՝ անհեթեթություն, անմտություն, բանականության մթափում, անեծք: Հերոսը փորձում է պատրանքներով ստեղծել իր աշխարհը. նա հասու չէ պատերազմից դուրս գալու ելք գտնել, խաթարված է նրա կյանքի ընկալումը, նա կյանքը պատկերացնում է միայն երազ-ցանկություններով: Հերոսը փորձում է կտրվել իրական կյանքից. հոգ չէ, թե աշխարհը կկործանվի: «Թող, ինչպես ասում են, – պնդում է Վեսլին, – կործանվի քաղաքակրթությունը, միայն թե ես կենդանի մնամ... Ինչու անհանգստանալ, թե այնտեղ ինչ-որ բան քանդվում է, եթե ես պետք է հաշմանդամ դառնամ: Ամեն մի ազնիվ մարդ բանակում մտածում է նույն բանը» (Սարոյան 1991, 171): Պատերազմը խեղել է մարդկանց, խաթարել է մարդկանց գիտակցությունը. նրանք դադարել են մարդ լինելուց, չգիտեն՝ ինչու են կռվի դաշտում, ինչու են կռվում, ովքեր են իրենք, որն է իրենց կյանքի նպատակը» (Սարոյան 1991, 171):

Վեսլին իր կեցության իմաստը հասկանում է միայն խոր ցնցումների ժամանակ, երբ, որպես գերի, հայտնվում է համակենտրոնացման ճամբարում: Նրա առջև կրկին բացվում է իրեն խորապես հարազատ գոյության աշխարհը: Վեսլին ցանկանում է ստեղծել հալածվածների, մերժվածների, կյանքից արհամարհվածների իր պետությունը, որտեղ մարդիկ պաշտպանված կլինեն ամեն տեսակ աղետից ու չարիքից, որտեղ աշխարհը կառավարվելու է սիրո, մարդկայնության, զգացմունքի օրենքով, որի շնորհիվ էլ հնարավոր կլինի մեկընդմիջտ վերջ դնել անժամանակ, անցանկալի մահվան և հասնել այնքան տենչալի պայծառ օրվան: Վեսլի Ջեքսոնը ձգտում է հասնել երջանկության. նա մարդկային գոյության գլխավոր գրավականը համարում է սերը, որի շնորհիվ էլ փորձում է վերափոխել աշխարհը. սիրո կողքին անզոր է անգամ պատերազմը: Սարոյանն իր հերոսին չի թողնում հուսահատության վիճակում: Գրողը գտնում է պատերազմից դուրս գալու ելքը. որն է՝ մարդու նկատմամբ սերն ու հավատը, նրա բարեկամեցությունը (Balakian 1998, 126): Միայն գիտակից նվիրումով հնարավոր կլինի ձեռք բերել հաղթանակ, խաղաղ կյանք: Գրողն անընդմեջ որոնում է սեր, բարություն և Աստված իր իսկ հերոսների մեջ (Lee 1998, 252): Դժվար չէ նկատել, որ Սարոյանի այս ստեղծագործության հիմքում Ա. Քամյուի «Թագա-

վորում է անհեթեթությունը, սերն է իշխում» 30-ական թթ.-ին ձևակերպած «Էկզիստենցիալիզմ-ռոմանտիզմ» երկիմաստ հասկացությունն է: Վեպի ավարտը լավատեսական է: Վեպի Ջեքսոնը վերադառնում է տուն՝ սկսելու նոր կյանք: Չկա այլևս դաժան պատերազմը, սակայն մնացել են տխուր հիշողությունները, որոնք նրան ուղեկցելու են ողջ կյանքի ընթացքում՝ մերթընդմերթ հիշեցնելով անսկիզբ ու անվերջ, անհեթեթ ու անմիտ պատերազմի մասին, որոնք մարդկության գոյության անբաժանելի մասն են կազմում, որն իր ամբողջության մեջ և՛ արտաբնական է, և՛ ընդվզում, և՛ գիտակցության հոսք: Հերոսին այն միշտ կկանգնեցնի անպատասխան հարցերի առջև. «Ինչո՞ւ համար Ջիլի մեծ եղբայրը չվերադարձավ տուն, ինչո՞ւ համար Ջո Ֆոկսհոլը չի վերադառնում տուն, ինչո՞ւ տուն չվերադարձավ Դոմինիկ Տաոսկան: Ինչո՞ւ մի քանիսին ինձ նման բաժին է ընկել ամբողջ երջանկությունը, իսկ մյուսներին՝ ոչինչ: Ինչո՞ւ, ինչո՞ւ...» (Սարոյան 1988, 315), և նրան այդ անպատասխան հարցերը միշտ կօգնեն սթափ հայացքով նայել կյանքին և իր գոյության ընթացքում ճիշտ կողմնորոշվել: Այս հարցերի պատասխանը անպատասխան լռությունն է, տիեզերական ինչ-որ անկարգությամբ մարդու համար գծած կյանքի սահմանային ընդունումն ու գիտակցումը, սահմաններ, որոնք պետք է մարդ արարածը լռեցյալն տանի ու համբերի՝ ճակատագրի առաջ միշտ մնալով սպասող ինչ-որ մի պատասխանի, որը չկա և չի կարող լինել:

### **Եզրակացություններ**

Սարոյանը «Մարդկային կատակերգություն», «Վեպի Ջեքսոնի արկածները» վեպերում պատկերում և խստագույնս քննադատում է ատելություն, թշնամանք սերմանող պատերազմները, որոնք ծնվել են մարդու՝ ինքն իրենից, մարդկանցից օտարացվածությունից: Գրողի խորին համոզմամբ՝ մարդկանց միջից օտարացվածությունը հեռացնելու դեպքում միայն հնարավոր կլինի վերջ դնել պատերազմին:

Սարոյանն առաջ է քաշում անհատի փրկության ճանապարհը՝ արտահայտելով իր վերաբերմունքը կյանքի և մահվան, սիրո և ատելության, երազանքի ու իրականության հանդեպ, որն ամեն պահ ի հայտ է գալիս հատկապես մարդու հոգևոր անսպառելիության բացահայտման միջոցով:

### **Շնորհակալական**

Այս հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում արտասահմանյան գրականության մասնագետ, ք.գ.դ. Կ. Մատինյանին:

### **Գրականություն/References/Литература**

1. Սարոյան Վ. 1986, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, «Սովետական գրող»:  
Saroyan W. 1986, Works, vol. 1, Yerevan, Sovetakan Groggh (in Armenian).

2. Սարոյան Վ. 1988, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, «Սովետական գրող»:  
Saroyan W. 1988, Works, vol. 3, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).
3. Սարոյան Վ. 1991, Ընտիր երկեր, հ. 4, Երևան, «Նաիրի»:  
Saroyan W. 1991, Works, vol. 4, Yerevan, Nairi (in Armenian).
4. Balakian N. 1998, The World of William Saroyan, Hardcover, UNKNO Press.
5. Calonne D. 1983, William Saroyan: My Real Work is Being, University of North Carolina Press.
6. Hamalian L. 1987, William Saroyan: The Man and the Writer Remembered, Rutherford, New Jersey, Fairleigh Dickinson University Press.
7. Hovard R. Floan 1966, An Early Critical Examination of His Works, Hardcover, Twayne Pub Press.
8. Lawrence L., Gifford B. 1998, Saroyan: A Biography, Berkeley, University of California Press.
9. Tololyan Kh. 1996, Armenian American Literature, New Immigrant Literatures in the United States, A Sourcebook to Our Multicultural Literary Heritage, London, Greenwood Press.
10. Зверев А. 1982, Грустный, солнечный мир Сарояна, Ереван, «Советакан грех».  
Zverev A. 1982, Saroyan's Sad, Sunny World, Yerevan, Sovetakan Grogh (in Russian).
11. Сароян В. 1999, Рассказы, интервью, эссе, воспоминания, Ереван, «Наири».  
Saroyan W. 1999, Stories, Interviews, Essays, Memoirs, Yerevan, Nairi (in Russian).